

Մոնթրեալի մեջ տեղի ունեցաւ Ս. Յակոբ Ազգ. վարժարանի շրջափակի վերանորոգման մեկնարկի Հողօրհնէքը



Կարդալ էջ 3

### Ճուլի Քրաուլի նշանակուեցաւ Հայաստանի մէջ Գանատայի նոր դեսպան

ՕԹԹԱՈՒԱ.– Գանատայի արտաքին գործոց նախարարութիւնը հինգշաբթի յայտարարեց, որ Ճուլի Քրաուլի նշանակուած է Հայաստանի Հանրապետութեան մէջ Գանատայի յաջորդ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ փոխարինելով Էնտրու Թըրնըրը: Յայտարարութեան մէջ չէ նշուած, թէ ան ե՛րբ պաշտօնապէս պիտի ստանձնէ իր պարտականութիւնները Երեւանի մէջ:

Քրաուլի 2003–ին միացած է Գանատայի արտաքին ծառայութեան: Ան Լաւալի համալսարանէն ունի իրաւագիտութեան վկայական եւ լրագրութեան վկայագիր, ինչպէս նաեւ քաղաքական գիտութիւններու մագիստրոսի աստիճան՝ Քեպէքի համալսարանի Մոնթրէալի մասնաճիւղէն:

Անոր դիւանագիտական եւ զարգացման գործունէութեան մեծ մասը կեդրոնացած է Ափրիկէի վրայ: Քրաուլի պաշտօնավարած է Ջամայկայի, Զիմպապուէի, Քոնկոյի ժողովրդավարական Հանրապետութեան, Ռուանտայի եւ Եթովպիոյ մէջ՝ զբաղեցնելով նաեւ Ափրիկեան Միութեան հետ Գանատայի յարաբերութիւններով: Վերջին շրջանին ան Գանատայի բարձրագոյն յանձնակատարն էր Ռուանտայի մէջ եւ դեսպանը՝ Պուրուենտիի մէջ:

Քրաուլի պիտի փոխարինէ Էնտրու Թըրնըրը, որ 2023–ի Սեպտեմբերին նշանակուած էր Հայաստանի մէջ Գանատայի առաջին մշտաբնակ դեսպանը: Անոր պաշտօնավարութեան ընթացքին՝ 25 Հոկտեմբեր 2023–ին, պաշտօնապէս բացուեցաւ Երեւանի մէջ Գանատայի դեսպանատունը՝ նոր հանգրուան մը բանալով երկու երկիրներու յարաբերութիւններուն մէջ:

Գանատահայ համայնքը տասնամեակներ շարունակ առանցքային դեր ունեցած է Հայաստան–Գանատա յարաբերութիւններու զարգացման մէջ՝ խորհրդարանական, հասարակական եւ քաղաքական հետեւողական աշխատանքով Հայաստանի, Հայոց Յեղասպանութեան եւ Արցախի հարցերը պահելով Գանատայի օրակարգին վրայ:

Քրաուլի պաշտօնը պիտի ստանձնէ այնպիսի ժամանակաշրջանի մը, երբ Գանատա կը շարունակէ ընդլայնել Հայաստանի հետ քաղաքական երկխօսութիւնը, զարգացման աջակցութիւնը, մարդասիրական համագործակցութիւնը եւ շրջանային ապահովութեան ոլորտի ներգրաւուածութիւնը:



### ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը՝ Գարեգին Բ. Կաթողիկոսին դէմ յարուցուած գործին առիթով

Սիրելի՛ հայրենակիցներ,

Առեւտուած ենք հայ ժողովրդի պատմութեան ամենանպատուաբեր, պատմական նախագէպը հունեցող փաստին: Վարչախմբի կողմից Հայ առաքելական Սուրբ եկեղեցու ծրագրաւորուած թիրախաւորումն ու հալածանքները հատել են բոլոր կարմիր գծերը: Ապօրինաբար յարուցուած քրէական վարոյթի շրջանակներում դատական գործընթաց է յարուցուել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ ՆՍՕՏՏ Գարեգին Բ.–ի եւ մի շարք բարձրաստիճան հոգեւորականների դէմ:

Հայ առաքելական Սուրբ եկեղեցին դարեր շարունակ եղել եւ մնում է հայ ժողովրդի հոգեւոր, ազգային եւ մշակութային ինքնութեան անսասան յենասիւնը, որն առաջնորդել է մեր ժողովրդին ամենածանր փորձութիւնների միջով, պահպանել է մեր Սուրբ հաւատքը, ազգային ինքնութիւնը, լեզուն եւ դարաւոր արժէքները:

Եկեղեցու հեղինակութեան եւ նրա հոգեւոր առաքելութեան դէմ ուղղուած ՀՀ իշխանութիւնների գործողութիւնները հակասահմանադրական են եւ հակազգային: Այսպիսով հիմնովին խարխուլում է պետութիւն–եկեղեցի յարաբերութիւնների տարանջատման սահմանադրական սկզբունքը, ոտնահարում հազարաւոր հաւատացեալների խղճի ազատութեան իրաւունքն ու հոգեւոր արժանապատուութիւնը, խորանում հանրային պառակտուածութիւնը, թուլանում մեր ինքնութեան հիմքերն ու նոր ցնցումների ենթարկում պետական ու հասարակական կեանքը:

Որպէս Հայ առաքելական Սուրբ եկեղեցու հաւատաւոր զաւակներ՝ դատապարտում ենք իշխանութիւնների որդեգրած հակօրինական գործողութիւնները, անսակարկ վստահութեամբ վերահաստատում ենք մեր լիակատար աջակցութիւնը Հայ առաքելական Սուրբ եկեղեցուն եւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Կոչ ենք անում դատաւրաւապահ համակարգին՝ մնալ սահմանադրականութեան եւ ՀՀ օրէնքների շրջանակներում եւ չտուել քաղաքական խարդաւանքների պարտադրանքին: Թեմերի կառավարման եւ առհասարակ կանոնական իրաւունքի ու ներքին ընթացակարգերի հետ կապուած հարցերը դտնում են բացառապէս եկեղեցու իրաւասութեան տիրոյթում, եւ ցանկացած միջամտութիւն անթոյլատրելի է:

Կոչ ենք ուղղում մեր հայրենակիցներին՝ ազգային գիտակցութեամբ ու համերաշխութեան սկզբունքներով առաջնորդուելով, պահպանել ազգային միասնութիւնը, համախմբուել Հայ առաքելական Սուրբ եկեղեցու, նրա հոգեւոր առաքելութեան եւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շուրջ:

ՀՅԴ ԲԻՒՐՕ

## BEFORE YOU REPLACE THEM REJUVENATE THEM.

Don't buy new when  
your hearing aids can  
sound new again.

-  **REVIVE**  
Deep Clean & Restore
-  **RENEW**  
Calibrate & Optimize
-  **REJUVENATE**  
Hear Like New



hearing aid source  
hearing instrument specialists

[hearingaidsource.ca](http://hearingaidsource.ca)

 [hello@hearingaidsource.ca](mailto:hello@hearingaidsource.ca)

**NEVER WORN HEARING AIDS BEFORE? NOT SURE WHERE TO START?**

If your hearing isn't as clear as it used to be, or you're exploring hearing aids for the first time, we offer free hearing tests to assess your hearing. Our team provides clear, professional guidance so you feel confident and supported from your first appointment.



# Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Սեփականատեր  
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն  
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները  
ուտելիքներու վերաբերեալ

 IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING  
ROASTING FRESH NUTS  
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA  
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել  
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ  
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել  
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher  
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200  
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



## Շաւարշ Քրիսեանի ծնունդը անմահացաւ Հայ Մարզիկի օրուան յիշատակումով

«Ազգ մը առողջ եւ հզօր կ’ըլլայ, երբ իր երիտասարդութիւնը առողջ, կարգապահ եւ հայրենասէր ըլլայ».  
Շաւարշ Քրիսեան

ՀՄԸՄ–ի մարզական Ա. համագումարին առաջարկով եւ Կեդրոնական վարչութեան որոշումով, 22 յուլիսը՝ Շաւարշ Քրիսեանի ծննդեան օրը, հռչակուած է Հայ Մարզիկի օր:

Շաւարշ Քրիսեան (1886–1915) հայ մանկավարժ, լրագրող, մարզական գործիչ եւ «Մարմնամարզ» պարբերականի հիմնադիր–խմբագիրն էր: Ան կը նկատուի մարզական կազմակերպուած հայկական շարժման հիմնադիրներէն մէկը, որ զոհուած է Հայոց ցեղասպանութեան ընթացքին:

Տարուէ տարի գեղեցիկ սովորութեան վերածուած Հայ Մարզիկի օրը, այս տարի աւելի լայնածաւալ կերպով յիշատակուեցաւ Գանատայի Օնթարիո եւ Քեպէգ նահանգներուն մէջ, անմահացնելու համար Շաւարշ Քրիսեանի ծննդեան օրը, մնայուն ներկայութիւն դարձնելով իւրաքանչիւր ՀՄԸՄ–ական մարզիկի մտքին եւ սրտին մէջ:

Հոփանաւորութեամբ Գանատայի Շրջ. վարչութեան եւ կազմակերպութեամբ Շրջանային Մարզական յանձնախումբին, չորեքշաբթի, 22 յուլիս 2026–ին, Թորոնթոյի, իսկ ուրբաթ եւ շաբաթ, 24 եւ 25 յուլիս 2026–ին, Մոնթրէալ–Լաւալի մէջ տեղի ունեցան նահանգային բարեկամական մրցաշարքեր, Գանատայի զոյգ նահանգներու մասնաճիւղերուն միջեւ:



Թորոնթոյի մասնաճիւղի մրցաշարքերը տեղի ունեցան Թորոնթոյի Հայ Երիտասարդական կեդրոնի ՀՄԸՄ–ի մարզադաշտէն ներս: Սոյն օրուան իրենց մասնակցութիւնը բերին Թորոնթոյի մասնաճիւղի ցանցագնդակի (volleyball) Ա. եւ Բ. խումբերը եւ կողովագնդակի Գեմպրիճի եւ Թորոնթոյի մասնաճիւղերուն աւագ (senior) մարզիկները:

Քեպէգ նահանգին մէջ տեղի ունեցան ՀՄԸՄ Կամք–Մոնթրէալի, Լաւալի եւ Օթթաւայի մասնաճիւղերուն նահանգային խաղերը, մասնակցութեամբ աւելի քան 250 մարզիկներու:

Սոյն մրցաշարքին մաս կազմեցին ոտնագնդակի, կողովագնդակի եւ ցան–



ցագնդակի խումբերը, ինչպէս նաեւ վեթերաններու ոտնագնդակի խումբը: Տեղին է յիշել, թէ նահանգային այս խաղերուն առաջին անգամ ըլլալով Օթթաւայի միաւորը իր մասնակցութիւնը բերաւ, ցուցաբերելով հաճելի խաղարկութիւն:

Երկու օրերու վրայ երկարող մրցաշարքերը, եղբայրական մրցակցութիւն եւ գնահատելի խաղարկութիւն ցուցաբերեցին, քաջալերողներուն պարգեւելով բերկրալի պահեր:

Մրցաշարքերուն աւարտին, ներկայութեամբ Գանատայի Շրջանային վարչութեան ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ Շրջանայինի մարզական յանձնախումբին, մասնակից քոյրերուն եւ եղբայրներուն բաշխուեցան օրուան խորհուրդը յատկանշող խորհրդանշական մետալներ:

Սոյն մրցաշարքը եզակի էր այն իմաստով, թէ Շրջանային վարչութիւնը յատուկ գնահատագրերով վարձատրեց Գանատայի տարածքին գործող բոլոր մասնաճիւղերու անձնուէր, ծառայող եւ կամաւոր աշխատանք իրագործող մարզիչները եւ մարզիչներու օգնականները, որոնք անվերապահօրէն եւ անխափան կերպով կը ծառայեն եւ կ’իրագործեն ՀՄԸՄ–ի մարզախաղերը:

Այսօր ՀՄԸՄ–ը մեծ ռահվիրայ Շաւարշ Քրիսեանի շունչով կը շարունակէ իր երթը, պատրաստելով առողջ մարմնով, լուսաւոր մտքով եւ ազնիւ հոգիով սկառտներ եւ մարզիկներ:

ՀՈՒՐԻՆԱ

## Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի շրջափակի վերանորոգման մեկնարկի Հողօրհնէքը

ՄՈՆԹՐԷԱԼ.– Կազմակերպութեամբ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Հիմնադրամին, 12 օգոստոս 2026–ին, յետմիջօրէի ժամը 5:00–ին, տեղի ունեցաւ Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի չրջափակի վերանորոգման ծրագրի մեկնարկը խորհրդանշող Հողօրհնէքը, ձեռամբ Գանատայի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տէր Բաբգէն Արք. Չարեանի, ներկայութեամբ վարժարանի տնօրէնութեան, Մոնթրէալի Ahuntsic–Cartierville չրջանի քաղաքապետ Մօտ Թերու Սեկէնի, Մոնթրէալի քաղաքապետական խորհուրդի անդամներ Էֆֆի Ճիւաննուի եւ Վանա Նազարեանի, Լաւալի Քաղաքապետական խորհուրդի անդամ Սեդա Թօփուգեանի, Հիմնադրամի նուիրատուներուն եւ բարերարներուն, հոգեւոր հայրերու, հայ համայնքի պատկան մարմիններու եւ ուղեկից միութիւններու ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ ծրագրի ճարտարապետական Les Ateliers Ublo եւ ծրագիրը իրագործող JCB Construction Canada ընկերութեանց ներկայացուցիչներու:

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի հիմնադրամին անունով բարի գալուստի խօսք արտասանեց Հիմնադրամի անդամ Նուշիկ Էլոյեան, որ ըսաւ. «Այսօր հաւաքուած ենք տօնելու նոր հանգրուանի մը սկիզբը այն վարժարանին, որուն հիմքը դրաւ քանի մը տասնամեակ առաջ երազատես սերունդ մը եւ հաւատացան անոր առաքելութեան, որպէս գործօն՝ հայապահպանման եւ համերաշխութեան»:

Անկէ ետք խօսք առաւ քաղաքապետ Մօտ Թերու Սեկէն, որ յայտնեց իր հիացումն ու գնահատանքը բարենորոգման այս ծրագրին առթիւ, եւ վստահութիւնը՝ անոր արհեստավարժօրէն իրագործման, որ պիտի ծառայէ վարժարանին առաւել բարգաւաճման ու զարգացման:

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Հոգաբարձութեան ատենապետ Սարօ Տէր Պետրոսեան Հոգաբարձութեան անունով ողջունեց ներկաները եւ ըսաւ. «Սուրբ Յակոբ վարժարանի առաքելութիւնը չի սահմանափակուիր դասարանի չորս պա–

տերուն մէջ: Մեր զաւակներուն ամբողջական նկարագիրը կը ձեւաւորուի գիտութեան, մարզանքի, մրցակցութեան, խմբային աշխատանքի, երաժշտութեան, արուեստի եւ համայնքային ծառայութեան միջոցով: Մարզադաշտին վրայ անոնք կը սորվին համագործակցութիւն, կարգապահութիւն, դիմադրողականութիւն, յաղթահարում, պատուով պարտուելի եւ երբեք չյուսահատիլ: Հետեւաբար, Սուրբ Յակոբի շինարարական ծրագրին մէջ ներգրոււմ կատարելը համազօր է իսկական մարդու եւ ապագայ առաջնորդի կերտման ներգրոււմ կատարելուն»:

Տնօրէնութեան խօսքը փոխանցեց վարժարանի տնօրէնուհի Լորի Ապրաքեան, որ ըսաւ. «Ահա թէ ինչո՞ւ այս նոր բակը պիտի ըլլայ մեր աշակերտներուն առօրեայ ուրախութեան, առողջութեան եւ ընկերային կեանքի կեդրոնը: Այստեղ, մեր մանուկները պիտի խաղան, պիտի մարզուին, պիտի սորվին բնութեան հետ ապրիլ, եւ միեւնոյն ժամանակ պիտի շագկապուին մեր պատմութեան եւ արմատներուն: Մեր նպատակն է Սուրբ Յակոբի աշակերտներուն ապահովել լաւագոյն պայմաններ՝ ոչ միայն մտաւոր, այլեւ ֆիզիքական եւ ընկերային ոլորտներէն ներս»:

Les Ateliers Ublo ճարտարապետական ընկերութեան տնօրէն Փասքալ Ռուիէ իր կարգին խօսք առնելով ըսաւ. «Այս ծրագիրը, որուն շինարարական աշխատանքներուն սկիզբը կը մեկնարկենք այս իրիկուն, ձերն է. դուք զայն յղացաք ձեր զաւակներուն համար: Եւ մենք չափազանց հպարտ եւ ուրախ ենք, որ ստեղծագործական այս աշխատանքը մեզի վստահեցաք: Ասիկա ապագայի դպրոցն է, որ իր արդիականութիւնը պիտի պահէ գալիք տասնամեակներուն ընթացքին: Կասկած չկայ, որ ապագայ սերունդները պիտի գնահատեն ձեր տեսլականը»:

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի հիմնադրամին անունով հանդէս եկաւ հիմնադրամի նախագահ Լէոն Աղազարեան, ըսելով. «Միբիւրի՛ նուիրատուներ, առանց ձեր անգնահատելի աջակ–

ցութեան այս մարզադաշտը այսօր թուղթի վրայ մնացած ծրագիր մը պիտի ըլլար: Դուք ներգրոււմ ըրիք ոչ թէ խոտածածկման կամ կառուցման, այլ մեր զաւակներուն ապագայի կերտման: Ասիկա հաւաքական երազանքի մը արգասիքն է՝ մեր երիտասարդներուն ընծայել տարածք մը, ուր անոնք կրնան իրականացնել մեր դպրոցին տեսլականը՝ “Միշտ աւելի բարձր, միշտ աւելի հեռու”»:

Անկէ ետք Գերշ. Տէր Բաբգէն Արք. Չարեան, Հոգշ. Տէր Յակոբ Վրդ. Եագուպեան եւ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Գառնիկ Աւ. Քհն. Գոյունեան մատուցեցին Աստուածաշնչական ընթերցումներ եւ աղօթք, ապա Սրբազան Հայրը կատարեց Հողօրհնէքն ու առաջին բահահարումը, ինչպէս նաեւ փոխանցեց իր սրտի խօսքը, ըսելով. «Յուզիչ է պահը, բայց միաժամանակ ոգեշնչող եւ գօտեպնդող է, որովհետեւ անցեալի եւ ներկայի մեր պատասխանատուներուն տեսիլքին եւ անոր իրագործման արգիւնքն է Սուրբ Յակոբի համայնքը՝ իր դպրոցով, կեդրոնով եւ եկեղեցիով: Եւ այսօր նոր սկիզբ կը դրուի այս համայնքին՝ նոր շինութեամբ բաւկի մը, որ սովորական բակ չէ, այլ տաքուկ օճախ մեր զաւակներուն, ուր պիտի թրծուին եւ մեծնան եւ վաղը մեր առողջ, գիտակից, պատասխանատու առաջնորդները դառնան»:

Աւարտին ներկաները հերթով կատարեցին հոգահարումը, որմէ ետք վարժարանէն ներս տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն:

Մօտաւորապէս 7.9 միլիոն տոլարի արժողութեամբ այս ծրագիրը կը տարածուի 20,727 քառակուսի մեթր տարածքի մը վրայ: Ան կը նախատեսէ բացօթեայ դասարանային տարածքի մը ստեղծումը, FIFA–ի չափանիշներուն համապատասխան ոտնագնդակի դաշտի մը կառուցումը, ինչպէս նաեւ աւելի քան 583 ծառերու եւ թուփերու տնկում, 1,140 քառակուսի մեթր տարածքի կանաչապատում եւ այլ ծրագիրներ:

ՍՈՒՆԱ ԹԻԹԻՉԵԱՆ ԿԷՏԻԿԵԱՆ

## Հայութեան հոգին ըստ Մադաքիա Վրդ. Օրմանեանի

«Հայերը այսօր ազգ մի են, հին ազգի մը մնացորդ, որ բարոյական կենդանութիւնը կորսնցուցած էէ։ Ծառ մի է հայն տերեւաքափ եւ ոստաքանց, այլ ոչ չորացեալ եւ փտեալ (...), որուն համար վերընձիւղելոյ գարունն հասած է», Մադաքիա Վրդ. Օրմանեան

ՄՈՒՏԲ

Այս յօդուածաշարքով, Օրմանեան վարդապե–տի (ապա՝ Պատրիարք Կ. Պոլսոյ) հայութեան հոգիին տեսութիւնը պիտի բացատրելով վերհանեմ, կարգա–ւորեմ, համադրեմ։ Անիկա տարածուած է «Ազգային Բանախօսութիւններ» տիտղոսով գիրքին մէջ, որ լոյս տեսաւ մեծավաստակ եկեղեցականին վախճանման 100–ամեակին առիթով, էջմիածին, 1918–ին, յառաջաբա–նով եւ ծանօթագրութեամբ Լիլիթ Սարվազեանի։

Գիրքը կը բովանդակէ վեց բանախօսութիւններ կամ ատենաբանութիւններ, որոնք կարդացուած էին Հայ Կաթողիկէ Եկեղեցիէն Հայց. Առաքելական Եկեղեցի իր անցման առաջին երկու տարիներուն։ Անոնց տիտղոս–ներն են՝ «Հայուն Անցեալը, Ներկայն Եւ Ապագայն», «Հայութեան Հոգին», «Միութիւն Հայութեան», «Հայ Ազգութիւն», «Կարօտ եմք» եւ «Հայ Երիտասարդու–թիւն»։

Արդ, բանախօսութիւնները կարդացուած են 19–րդ դարու 79–80–ին, եւ՝ անմիջապէս հրապարակուած. առաջինը «Մասիս»ի մէջ, միւսները՝ անջատ տետրերով։ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Կանխաւ ըսեմ, որ «հայութեան հոգի» ըսելով՝ Օր–մանեան վարդապետ չէ հասկցած բնագանցական յաւի–տենական ու անփոփոխ երեւոյթ մը. իրեն համար՝ ազգ մը դարաւոր «բարոյական շինուած» մըն է, բարոյական «մարմին մի», որ կը փոփոխուի թէ՛ դրականօրէն, եւ թէ՛ ժխտականօրէն, սակայն առաքինութիւններու խորք մը պահպանելով (թէ՛ որքա՞ն ժամանակ… գուշակութիւն չէ ըրած)։ Իր համոզմամբ, թէ՛եւ հայութեան հոգին բնագան–ցական յաւիտենական ու անփոփոխ երեւոյթ մը չէ, սա–կայն այն «շինուած»ին էութեան մէջ կայ «խսկութիւն» մը, որուն ուժականութիւնը չէ սպառած, եւ վերակեն–դանացման պարագային՝ առաջնորդութիւն կը խոստա–նայ…։ Ըստ իրեն, հայութեան հոգին՝ «հայոց մեծամաս–նութեան հոգին է», որուն էութեան մէջ՝ միայն ձիրքեր կան, կամ՝ «յատկութիւններ» (ինք «յատկութիւններ» ըսելով՝ միայն արժանիքներ իմացած է)։

Հայութեան հոգին՝ հայ անհատներու «սեպհա–կան հոգեկան յատկութեանց, եւ անհատներու իրա–րու յարաբերութեանց բովանդակութիւնն է», գրած է։ Բայց անհատական եւ հաւաքական որեւէ հոգի միայն չի կազմուիր փակ շրջանակի մէջ։ Յարաբերութիւններու ցանցերը անդին կ’երկարին, կը տարածուին…։

ԷՈՒԹԵԱՆ ՄԷՋԸ

Վարդապետը սկիզբէն պարզած է, թէ ինք ընդհա–նուր տեսութեան սահմանին մէջ պիտի մնայ, եւ քանի կը խորշի «վերացական եւ իմաստասիրական խորհրդա–ծութիւններէ», սակայն ոչ՝ իմաստասիրելէ, պիտի խօսի «գործնական եւ իրական խնդրոց» վրայ։ Իր ընդգրկելի–քը բացատրելով, գրած է. «հայոյն անցեալը գննած ժա–մանակս՝ չեմ ուզեր հրաւիրել ձեր մտադրութիւնը մին–

չեւ նախապատմական ժամանակաց վէպերուն վրայ։ Չեմ փնտռեր հայոյն անցեալը Ս. Գրոց էջերուն մէջ, եւ ոչ ալ վիճել կ’ուզեմ, թէ Եղեմական դրախտին դիրքը մեր հայրենեաց կը պատկանի՞» արդեօք։ Արդեօք Եփրատն եւ Տիգրիսն Մովսէսի՞ համանուն եւ համադի՞ր են հիմա սոյն անունը կրող գետերուն. արդեօք նախամարդոյն բարբառը հայերէ՞նն էր. արդեօք Նոյեան տապանին կա–յարան եղող Արարատը մեր Մասեաց գագա՞թն է. արդ–եօք մարդկութեան երկրորդ խանձարուրը Նախիջևանի հովի՞տն է. արդեօք ճշմարիտ աստուածգիրտութեան սէ՞ր–րը գինեց Հայկայ բազուկը Բելայ ամբարտաւանութիւնը նուաճելու»։ Այսինքն՝ ի մի խօսք՝ հրաժարած է հայու–թեան հոգիին մասին Մովսէս խորենացիէն մինչեւ Հ. Արսէն Բագրատունի պատկերացումներէն։ Որովհետեւ՝ խորհած է, թէ ատոնք գիտական չեն, թէ՛ դարուն ոգին չի ներեր նման բաներ, եւ թէ՛ օգտակար չեն կրնան ըլլալ իր առաջադրութեան։ Նաեւ՝ ատոր համար իր առաջադ–րութեան օտար համարած է «պատմական դրութեանց խնդիրները» (կը կարծեմ՝ նկատի ունեցած է պատմաքն–նական հարցերը), որոնք տարակարծութիւններով լի են. եւ գանտնք ալ «մէկ կողմ» թողած է։ Բայց պէտք է անմի–ջապէս ըսեմ, որ թէպէտ պատմաքննական խնդիրներով չէ զբաղած, սակայն պատմութեան վրայ նայուածքէն չէ հրաժարած)։ Ապա գրած է իր հարցումը. «Ի՞նչ էր հայը մեզմէ առաջ (...) մինչեւ «ամենամերձ կէտը»։

Գրած է. «Աւերակ է Հայաստան, աւերեալ է հայ ազգը, իւր աւերակաց նշխարքը բոլոր աշխարհի երե–սը սփռուած են, այդ աւերակները թող մեզի իմացնեն հայոց անցեալը»։ Եւ ան հայակերտ շինութեանց աւե–րակներուն նայելով՝ տեսած է հայութեան ձիրքերը, ու հաստատած. «Հայը, ուրեմն, իւր անցելոյն մէջ այնպիսի ձիրքեր ունեցաւ, որ իւր կեանքը ապահովեցին»։ Հակա–ռակ օտար լուծերուն, եւ զօրաւոր ազգերով չըմպատ–ուած ըլլալուն՝ հայութիւնը տոկաց «այնպիսի փորձա–նաց… որոնց առջեւ զօրաւորագոյն ազգեր տկարացան, եւ իրենց գոյութիւնը չկրցան պաշտպանել»։ Իսկ հա–յութիւնը «կայ, եւ էր եւ եղեւ ազգ մի ո՛չ աննշանակ, մեծագոյն ազգաց հետ մրցելոյ կարող, եւ մրցանաց մէջ՝ ո՛չ միշտ յետադաս, եւ եթէ ոչ՝ քաղաքական եւ իշխանա–կան գօրութեամբ, այլ գօրութեամբ մտաց եւ գօրութեամբ բարուց իրեն տիրապետողներուն վրայ ալ ազդեցութիւն գործածելու բաւական»։

Որո՞նք էին, ըստ իրեն, հայութեան անցեալի ձիր–քերը կամ յատկութիւնները.

1.– Անհատական իղձերու, զգացմունքներու, կա–րողութիւններու եւ տաղանդներու կատարելութիւններ։
2.– Խորարմատ զգացում հաւաքական «սիրտ»ին մէջ այն ոգիին, որ գինք գատած են ուրիշ ժողովուրդներէ։
3.– Հաւատարմութիւն «հայրենական» աւանդութիւն–ներուն, որոնցմով իր տարբերութիւնը հաստատած է։
4.– Աշխլընութեամբ գործածոււմ այն միջոցներուն, որոնք

խափանած են իր խառնումը ուրիշ ազգերու։
5.– Ցու–ցաբերում անհատական խորխտութեան՝ «որով ափ մի մարդիկ ահեղ բանակաց ձեռուընները» կաշկանդած են։
6.– Գործարկում յատուկ ընդունակութիւններու, որոնք անհատները կ’ընեն այն՝ ինչ որ են։
7.– Ինքնասիրու–թիւն, ինք կ’ըսէ «անձնասիրութիւն», որ սիրած է «ինչ որ իւրն է», հակառակ անոր թերի ըլլալուն։
8.– Կապ–ուածութիւն լեզուին, հաւատքին, ծէսին, սովորութիւն–ներուն։
9.– Ինչ ինչ կացութիւններու մէջ, ուժով ձեռք–բերումներու անկարութեան դիմաց՝ արուեստի, արհեստի մէջ ինքնիրագործում։
10.– Իր ժառանգածին աճեցում, եւ դուրսէն իւրացուցածին՝ ազգային ձեւաւորում։

Վարդապետը այս տաս կէտանի ցանկը տուած է «Հայուն Անցեալը, Ներկայն Եւ Ապագայն» բանախօ–սութեամբ, եւ առժամաբար՝ բաւարարուած։ Եւ ըսած՝ թէ ասոնք վերցնելու պարագային, հայութեան անցեա–լը կը դադրի մեկնաբանելի ըլլալէ։ «Բաւարարուած է», ըսի, որովհետեւ ետքը՝ «Հայութեան Հոգին» բանախօ–սութեան մէջ, այլ «յատկութիւններ» ալ թուարկած է, ինչպէս արթնութիւն, արիութիւն, յարատեւութիւն, չա–փաւորութիւն եւ միաբանութիւն։ Արթնութեամբ հասկ–ցած է՝ հայութեան հոգիին «բնական արթնութիւն»ը, որուն բխումներ ճանչցած է՝ անոր «աշխոյժ բնաւորու–թիւն»ը, «մտաց սրութիւն»ը, «որ եւ իցէ առթի» ինք–զինքը չկորսնցնելու, եւ «ամէնէն մեծ վտանգի մէջ» իսկ՝ կարողութիւնը ելքի դարման մը գտնելու եւ անոր գործադրութեան փութալու։ Արիութեամբ հասկցած է՝ «սրտի արիութիւն», որ դժբախտութիւններէն, նոյնիսկ անոնց «երկնաչափ»ներէն՝ չէ ընկճուած, եւ յոյսն ու փոյթը չէ կորսնցուցած։ Յարատեւութեամբ հասկցած է՝ ազգը, կրօնքը, լեզուն եւ սովորութիւնները պահպանե–լու նախանձախնդրութիւնը։ Չափաւորութեամբ հասկ–ցած է՝ գիտութիւնը «առթից համեմատ» վարուելու, իր յաջողութեամբ չզեղծանելու, ինքզինք մոռնալով՝ իր գլխուն եկած եղելութիւններուն եւ կրածներուն «խա–ղալիք չըլլալ»ու, եւ բոլոր պարագաներուն մէջ՝ իր «մի–ակերպութիւն»ը (ազգային նկարագի՞րը) պահպանելու՝ «արտաքին եւ բաղդի միջոցաց» օգտագործմամբ եւ կա–նոնաւոր կարգադրմամբ։ Միաբանութեամբ հասկցած՝ ազգի անհատներուն կարողութիւնը իրարու միանալով «ընդհանուր բարին եւ ընդհանրութեան աւանդ եղող բարիքը» պահպանելու, պաշտպանելու, դարգացնելու եւ կատարելագործելու։

Այս ու նախորդ ցանկին ձիրքերը կամ յատկու–թիւնները անթերիօրէն ի գործ դրուա՞ծ են։ Դրական չէ իր պատասխանը։ Այսուհանդերձ, հայութեան նաւը սպառսպուռ խորտակումէ ազատած է՝ չնորհիւ իր իս–կութեան կարելի վերակենդանացումներուն, խորհած է վարդապետը։

ԳԱՌՆԻԿ ԱԻ. Ք. Գ. (Շարունակելի 1)

### Պանք Օթոման. 130-ամեայ պատգամ մը՝ յանդգնութենէն դէպի ազգային յիշողութիւն

1890–ական թուականները հայ ժողովուրդին համար եղան ծանրագոյն փոր–ծութիւններու շրջան մը։ Համիտեան ջարդերը, անապահովութիւնը եւ միջազգա–յին խոստումներու դրժումը խոր հիասթափութիւն ստեղծած էին։ Այս պայմաննե–րուն մէջ ծնաւ այն համոզումը, թէ միայն դիմումները եւ դիւանագիտական բո–ղոքները այլեւս բաւարար չէին՝ միջազգային ուշադրութիւնը Հայկական հարցին վրայ պահելու համար։

Պանք Օթոմանի ընտրութիւնը պատահական չէր։ Դրամատուներ Օսման–եան կայսրութեան ֆինանսական կեանքի կարեւորագոյն հաստատութիւններէն մէկն էր եւ սերտ կապեր ունէր եւրոպական դրամազլուրի հետ։ Հետեւաբար, անոր վրայ կատարուած գործողութիւնը ունէր նաեւ խոր քաղաքական նշանակութիւն. նպատակն էր ստիպել Եւրոպայի կառավարութիւնները եւ միջազգային մամուլը կրկին անդրադառնալու Հայկական հարցին։ Այսպէս, Դրամատուներ դարձաւ քա–ղաքական բեմ մը, որմէ հայ յեղափոխականները փորձեցին իրենց ձայնը հասցնել աշխարհին։

Եւ այդպէս, գրաւուեցաւ Պանք Օթոմանը, 14 Օգոստոս 1896–ին։

Այս թուականը եւ գործողութիւնը ժամանակի հոլովոյթին հետ չմաշեցան։

Պանք Օթոմանի գրաւումը գուրս եկաւ գուտ պատմական յիշողութեան դաշ–տէն եւ դարձաւ ազգային յիշողութեան մաս մը՝ գաղափարական խորհրդանիշ մը հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան, քաղաքական պահանջատիրութեան եւ ազգային արժանապատուութեան։

Գործողութիւնը միայն յանդուգն քայլ մը չէր։ Անիկա քաղաքական պատ–գամ մըն էր՝ ուղղուած Օսմանեան իշխանութիւններուն եւ Եւրոպայի մեծ պետու–թիւններուն։ Պատգամ մը, որ կը յայտնէր, թէ հայ ժողովուրդը այլեւս պատրաստ չէր լուռ կերպով ընդունելու Արեւմտահայաստանի մէջ շարունակուող բռնու–թիւնները եւ անտեսուած մնալու միջազգային քաղաքականութեան մէջ։

Պանք Օթոմանի նշանակութիւնը կը գտնուի յաջորդ սերունդներուն փոխանցուած պատգամին մէջ։ Անիկա կը վկայէ, որ հայկական պահանջները այլեւս չէին կրնար մնալ միայն դիւանագիտական յուշագիրներու եւ չիրականաց–ուած խոստումներու մակարդակին վրայ եւ որ ալ սպասելը հնարաւոր չէր։ Անհրա–

ժեշտ էր քայլ մը, որ պիտի ստեղծէր միջազգային արձագանգ եւ պիտի ստիպէր մեծ տէրութիւնները վերադառնալ իրենց իսկ յանձնառութիւններուն։ Եւ այդ քայլը կը պահանջէր գիտակցութիւն, կազմակերպուածութիւն, պատասխանատուութիւն եւ քաղաքական հեռատեսութիւն։

Գործողութիւնը նպատակ չունէր ռազմական յաղթանակ արձանագրելու կամ իշխանութիւն գրաւելու։ Անիկա նախ եւ առաջ կոչ մըն էր՝ ուղղուած միջազգային խիղճին բայց որ դարձաւ նաեւ գաղափարական դպրոց, որ իր մէջ կը մարմնաւորէր քանի մը հիմնական արժէք։

Առաջինը՝ անձնագոհութիւն։ Գործողութեան մասնակիցները պատրաստ եղան իրենց անձնական կեանքը ստորադասելու ազգային նպատակին։

Երկրորդը՝ կազմակերպուածութիւն։ Պանք Օթոմանը ցոյց տուաւ, որ ազգային պայքարը կը պահանջէ ոչ միայն կամք, այլ նաեւ ծրագրուած եւ նպա–տակային աշխատանք։

Երրորդը՝ ազգային պատասխանատուութիւն։ Անիկա արտայայտեց այն հա–մոզումը, որ ժողովուրդներու իրաւունքները պաշտպանելու համար անհրաժեշտ է անձնական զոհողութիւն եւ յանձնառութիւն։

Եւ չորրորդը՝ քաղաքական հեռատեսութիւն։ Գործողութեան հիմնական ժա–ռանգութիւնը ոչ թէ գէնքն էր, այլ այն մտածողութիւնը, որ ազգային պայքարը պէտք է ունենայ յստակ նպատակ, միջազգային ընկալում եւ ռազմավարական հաշուարկ։

Պատմութիւնը արժէք ունի միայն այն ժամանակ, երբ անիկա կը դառնայ ներկայ սերունդներուն ուղեցոյց։ Հետեւաբար, Պանք Օթոմանին անդրադառնալ չի նշանակեր անցեալի փառաբանութիւն։ Անիկա յիշեցում է, որ ազգային իրա–ւունքներու պաշտպանութիւնը կը պահանջէ տեսլական, կազմակերպուած աշխա–տանք եւ հետեւողական նուիրում։

Իր ժամանակէն անդին անցաւ «Պանք Օթոման» գործողութիւնը։

Գործողութիւն մը՝ որ դարձաւ գաղափար, իսկ գաղափարը՝ ժառանգութիւն։

ԽԱԺԱԿ ԳՈՒԼԱԾԵԱՆ





## ՄԱՂՄՈՍ ԹԻՒ 9

Փառաւորեալ է Տէրը:

Ան մեր զօրութիւնն է եւ փրկութիւնը:

Ան մեր Աստուածն է, որ արդարութիւն կը գործէ,

որ իրաւունքը կը պաշտպանէ:

Անոր զօրութեան առջեւ հզօրները կը փոշիանան ու կը քշուին:

Անոր փրկութիւնը իր երկիւղով իմաստնացող ժողովուրդին հետ է:

Տիրոջ Աջը կը յաղթէ, իր ժողովուրդին ոսոխները կը տապալէ:

Թող անոնք յոխորտան՝ թէ պիտի հալածեն քեզ պաշտպանողները,

թէ պիտի հասնին անոնց,

թէ պիտի աւարը բաժնեն,

թէ զանոնք բնացնջելով պիտի կշտանան,

եւ թէ մնացորդներն ալ պիտի մատնեն տարտղնումի կորուստին:

Տիրոջ փրկութիւնը չ'ուշանար. զի Աստուած ընդ մեզ է:

Անկէա իր ճիշդ ժամանակին կու գայ. զի Աստուած ընդ մեզ է:

Համբերողները կը տեսնեն Անոր փրկարար սքանչելիքները.

զի Աստուած ընդ մեզ է:

Փառաւորեալ ես, Տէր, որ բոլոր ելքերուն Աստուածն ես:

Աստուածն ես ստրկութենէ դէպի ազատութիւն ելքին:

Աստուածն ես անարդարութենէ դէպի արդարութիւն ելքին:

Աստուածն ես խաբէութենէն դէպի ճշմարտութիւն ելքին:

Որդեգրեալներդ քեզմով կը մխիթարուին, կը զգաստանան,

Կ'ամբանան, կը վերականգնին:

Դուն ես, որ անոնց գլուխը բարձր կը պահես՝ ի փառս Ս. Երրորդութեանդ.

այժմ եւ միշտ եւ յափտեանս յափտենից:

ԱՐՑԱԽԵԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐ

Գառնիկ Աագ Քահանայ Գոյունեան

## MARY'S SONG Luke 1:46-55



“My soul glorifies the Lord  
and my spirit rejoices in God my Saviour,  
for he has been mindful  
of the humble state of his servant.

From now on all generations will call me blessed,  
for the Mighty One has done great things for me—  
holy is his name.

His mercy extends to those who fear him,  
from generation to generation.

He has performed mighty deeds with his arm;  
he has scattered those who are proud in their inmost thoughts.

He has brought down rulers from their thrones  
but has lifted up the humble.

He has filled the hungry with good things  
but has sent the rich away empty.

He has helped his servant Israel,  
remembering to be merciful  
to Abraham and his descendants forever,  
just as he promised our ancestors.”

## POWER AND POWERLESSNESS

**Monday, 11 April 2020**

This morning, while following the news, I heard the distressing witness of a doctor in Italy; he said, “We doctors have become powerless in the face of this growing human tragedy created by the pandemic....”

Power and Powerlessness have been given a wide range of definitions. In the Bible, power and powerlessness are closely interconnected. Power connotes authority and responsibility as a God-given gift and mandate to human beings to organize their life and govern the creation. Greed and lust of worldly power, which originated with Adam's sin, have led humanity to affirm human power against God's power. In Christ, on the other hand, God's power is manifested through the cross, not by His omnipotence, but by His powerlessness: “The weakness of God is stronger than human strength” (1 Cor 1:25), and God's “Power is made perfect in weakness” (2 Cor 12:9).

The cross broke the power of evil and became the supreme manifestation of Christ's power of love against the human love of power. The cross is a symbol of the victory of life over death. In the Easter hymn of the Armenian Church, we sing: “Christ defeated death by death.” The cross is the converging point of death and life. It is the concrete expression of the brokenness of the world that was healed and restored by the Crucified: “By his wounds you have been healed” (1 Pet 2:24), asserts the apostle.

God's power of love through the cross, aimed at saving humanity from the “visible and invisible powers or rulers or authorities” (Col 1:16) of evil, continues to operate in the world through the church, calling the forces of economic dominion, political oppression, racial discrimination, violation of human rights, violent extremism, and evil ideologies for conversion, healing, and reconciliation. Conflict between the divine power of love and liberation and the human power of hate and domination is present in all aspects of life. Christian faith, grounded on biblical values and truth, reminds us that all structures and systems as well as practices and exercise of power must be accountable to God. The human being should recognize the limitations of his power before the omnipotence of divine power.

I will never forget my confrontation with Robert Mugabe, the president of Zimbabwe, in 1998. While addressing the representatives of church delegations attending the 9th Assembly of the World Council of Churches (WCC) in Harare, President Mugabe said arrogantly that church authorities should remain within the walls of the church and not get involved in public affairs. In my response, as Moderator of the WCC, I said that the church cannot remain silent in the face of the arrogance of power, corrupted power structures, and oppressive governance, and that in Christ, the human being is no longer the hostage of unjust structures and oppressive powers. I am sure that those present, and the churches of Zimbabwe, still remember the tense and unpleasant situation that was created with my remarks at the presidential palace.

Human power can cut two ways. It can liberate or enslave, enrich or impoverish, strengthen or weaken, reconcile or polarize, unify or alienate. Power acquires its true meaning if it is exercised with responsibility, accountability, and transparency. Likewise, power gets its authenticity and credibility by giving, caring, serving, and sharing.

The right perception and responsible use of power should remain a global ethical challenge to all those who hold and exercise it. Any form or expression of power cannot last if it is not driven and underpinned by ethical values and people's interests. Any power structure under the cover of democracy becomes an instrument of corruption and autocracy if it lacks accountability. All powers are temporary; all nations are vulnerable; all systems are fragile; the mightiest are powerless before the Almighty. History has concretely proven this truth. The coronavirus pandemic has once again reminded us of this basic truth.

**TURNING TO GOD  
ARAM I**



Հովանաւորութեամբ՝  
Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեանի  
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Կազմակերպութեամբ՝  
Ազգային Առաջնորդարանի  
Հայեցի Դաստիարակութեան Բաժանմունքին

Ազգային Առաջնորդարանի՝  
Նոր Հրատարակութիւններու՝

**ՀՆՈՐՀԵՆԴԷՍ**

ԲԱՐԵԻ... ԵՍ ԳԻՐՔՆ ԵՄ

Մեկենաս՝  
Բաղդումաճեան Հիմնարկ


Գիրքը կը ներկայացնէ՝  
ՆԱՅԻՐԻ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Հինգշաբթի, 20 Օգոստոս 2026  
Երեկոյեան ժամը 7:00-ին

Մոնթրէալի Հայ Կեդրոնի  
«Ահարոնեան» Սրահէն ներս

Միտով կը հրաւիրենք ձեզ ներկայ գտնուելու  
«Բարեւ... Ես Գիրքն եմ» դասագիրքի շնորհանդէսին:

ԴԻԲԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



Հովանաւորութեամբ՝  
Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեանի  
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Կազմակերպութեամբ՝  
Ազգային Առաջնորդարանի  
Հայեցի Դաստիարակութեան Բաժանմունքին

Ազգային Առաջնորդարանի՝  
Նոր Հրատարակութիւններու՝

**ՀՆՈՐՀԵՆԴԷՍ**

ԲԱՐԵԻ... ԵՍ ԳԻՐՔՆ ԵՄ

Մեկենաս՝  
Բաղդումաճեան Հիմնարկ


Գիրքը կը ներկայացնէ՝  
ՆԱՅԻՐԻ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Հինգշաբթի, 27 Օգոստոս 2026  
Երեկոյեան ժամը 7:00-ին

Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ  
«ՅՈՎՎԱՆԵԱՆ» Սրահէն ներս

Միտով կը հրաւիրենք ձեզ ներկայ գտնուելու  
«Բարեւ... Ես Գիրքն եմ» դասագիրքի շնորհանդէսին:

ԴԻԲԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



## ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ...

Երկնաւոր Արքայ, տո՛ր  
ինծի քու արքայութիւնդ,  
որ քու սիրելիներուդ  
խոստացար, եւ զօրացնիր  
սիրտս որպէսզի ատեն  
մեղքը եւ միայն քեզ սիրեմ  
եւ քու կամքդ կատարեմ. եւ  
ողորմէ՛ քու արարածներուդ  
եւ ինծի՝ բազմամեղիս:

ԱՄԷՆ:





## ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՐԳԵՒԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

«Իմ խաղաղությունս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է» (Յի 14:27):

Որպէսզի գիտնանք թէ Յիսուս այստեղ ինչ խաղաղութեան մասին է, որ կը խօսի, կարեւոր է յիշել, որ Յիսուս այս հաստատումը կատարեց՝ այս աշխարհէն իր բաժանումին մասին բազմիցս խօսելէ ետք (Յի 13:33, 36, 14:2-4, 12, 18-19): Մենք կրնանք պատկերացնել թէ աշակերտները որքան տակնուվայ եղան ու խռովեցան երբ Յիսուսէն լսեցին թէ զիրենք պիտի թողուր ու մեկնէր այս աշխարհէն. զուր տեղ չէ որ Յիսուս անոնց ըսաւ. «Մի խռովք ու մի՛ վախճաք» (Յի 14:27): Անոնք ինչպէս կրնային չխռովիլ երբ իրենց Փրկիչը կը պատրաստուէր բաժնուելու իրենցմէ: Եւ սակայն, ճիշդ այն պահուն որ անոնք կարիքը ունէին խաղաղութեան Իշխանը՝ Յիսուս անոնց ըսաւ. «Իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի, որ այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է»: Այս բառերով Յիսուս ըսել ուզեց աշակերտներուն. «Ճիշդ է որ ես կը մեկնիմ այս աշխարհէն, բայց իմ խաղաղութիւնս ձեզի, ձեր մօտ ու ձեր մէջըլ թողում: Ես մարմինով կը հեռանամ ձեզմէ, բայց հոգեպէս ներկայ պիտի մնամ ձեր մէջ, եւ հոգեկան ներկայութեամբս՝ խաղաղութեամբ պիտի լեցնեմ ձեզ»:

Անմահը կը պատրաստուէր մեռնելու, բայց պահած էր իր խաղաղութիւնը, եւ ի՛չ միայն պահած էր, այլեւ կարող էր այդ խաղաղութիւնը ուրիշներուն ալ տալու. մենք կրնանք մահուան վտանգին առջեւ պահել մեր խաղաղութիւնը:

Փորձութեան առջեւ էր Յիսուս, բայց լեցուն էր խաղաղութեամբ. մենք կրնանք խղաղութեամբ լեցուն մնալ երբ փորձութիւնները մեզ կը շրջապատեն:

Կրնանք նմանիլ Տիրոջ որ իր խաղաղութիւնը չկորսնցուց երբ իր նաւը կը ծփար փոթորկալից ալիքներուն վրայ:

Մենք չենք կրնար ծովը խաղաղեցնել, բայց կրնանք խռոված ծովուն վրայ մեր խաղաղութիւնը պահել:

Հաւատացեալը այն մարդը չէ որ խաղաղ նաարկութիւն կ'ունենայ, այլ այն մարդը՝ որ կը պահէ իր սրտի խաղաղութիւնը, երբ իր նաակը կը հանդիպի կեանքի փոթորիկներուն: Նման խաղաղութիւն մը աշխարհը չի կրնար տալ, որովհետեւ չունի որ տայ: Ահա թէ ինչու Յիսուս կ'ըսէ, որ իր տուած խաղաղութիւնը «այս աշխարհի տուած խաղաղութենէն տարբեր է»: Այո՛, տարբեր է, որովհետեւ աշխարհիկ մարդը չի կրնար իր խաղաղութիւնը պահել փորձութեանց ու նեղութեանց դիմաց, մինչդեռ Աստուծոյ մարդը՝ կրնայ: Աշխարհիկ մարդը փոթորիկին դիմաց կը փոթորկի, իսկ Քրիստոսի մարդը, ի՛չ միայն չի փոթորկիր, այլեւ՝ իր խաղաղութեամբ կը խաղաղեցնէ փոթորիկն ու փոթորկածը:

Այո՛, սիրելիներ, Քրիստոսի տուած խաղաղութիւնը՝ տարբէր է աշխարհի տուած խաղաղութենէն, որովհետեւ Քրիստոսի խաղաղութիւնը՝ սրտի՛ խաղաղութիւն է, հոգիի՛ խաղաղութիւն է, մտքի՛ խաղաղութիւն է, ներքին ու մնային խաղաղութիւն է, մինչդեռ աշխարհի տուած խաղաղութիւնը՝ մարմնաւոր ու ժամանակաւոր խաղաղութիւն է:

***ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ***  
***Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան***

## Ո՞Վ Է ՃՇՄԱՐԻՏ ՄԱՅՐԸ:

Ճշմարիտ մայրը ան է, որ ի՛չ միայն զաւակ կը բերէ լոյս աշխարհ, այլեւ զայն կը բերէ աշխարհի լոյսին՝ Քրիստոսի: Ճշմարիտ մայրը ան է, որ ի՛չ միայն մարմնաւոր ծնունդ կու տայ իր զակին, այլեւ զայն կ'առաջնորդէ Սուրբ Հոգիին միջոցաւ իր վերածնունդը ապրելու: Ինչպէս իսկական ծնունդը հոգեւոր ծնունդն է եւ ի՛չ թէ մարմնաւոր ծնունդը, նոյնպէս ալ, իսկական մայրը իր զակին մարմնաւոր ծնունդ տուողը չէ, այլ՝ զայն հոգեւոր ծնունդի առաջնորդողը: Ճշմարիտ մայրը իր զաւակը հրեշտակներուն երգակից ըլլալու եւ Աստուծոյ Գառնուկին համար երգելու պատիփն պատրաստող մայրն է:

### ԻՆՉ Է ՀԱՅ ՄՕՐ ԿՈՉՈՒՄԸ

Հայ մօր կոչումն է՝ քրիստոնէական դաստիարակութիւն ջամբել իր զակին: Այս մասին Յերոնիմոս կ'ըսէ. «Այն ծնողները որոնք քրիստոնէա կան անհրաժեշտ դաստիարակութիւնը չեն փոխանցեր իրենց զաւակներուն, կը նշանակէ թէ զանոնք ծնան այս ժամանակաւոր կեանքին համար, եւ սակայն անոնց առջեւ բացին յափտենական մահուան դռները»։ Իսկ Յովհան Ոսկեբերան Հայրապետը կ'ըսէ. «Յաճախ ծնողներէն շատեր ամէն ինչ կ'ընեն որ իրենց զաւակ ները ունենան լաւ տուն, լաւ գործ, լաւ հարստութիւն, լաւ դիրք, բայց ոչինչ կ'ընեն որ անոնք ունենան ընտիր հոգի, մաքուր սիրտ եւ Աստուածահաճոյ կեանքի ընթացք: Ահա այս է որ ամբողջ աշխարհը տակնուվոյայ կ'ընէ»։ Ըսի, թէ հայ մօր կոչումն է՝ քրիստոնէական դաստիարակութիւն ջամբել իր զաւակներուն. իսկ քրիստոնէական դաստիարակութիւն ջամբած ըլլալու համար անոնց՝ պէտք է շատ բան սորվեցնեն անոնց. յիշեմ հիմնական չորս բան.-

ա) Պէտք է անոնց սորվեցնեն սիրել Քրիստոսը, պաշտել Քրիստոսը, փնտռել Քրիստոսը, պատուել ու փառաբանել Քրիստոսը: Երբ մեր զաւակները սորվին սիրել Քրիստոսը՝ իրենց յափտենականութիւնը ապահով ձեռքերու մէջ դրուած կ'ըլլայ:

բ) Պէտք է անոնց սորվեցնեն սիրել մարդիկը: Մարդը Քրիստոսի սիրոյն պտուղն է. կարելի չէ սիրել Քրիստոսը եւ չսիրել անոր սիրոյն պտուղը: Մարդը Քրիստոսի ձեռքին գործն է. կարելի չէ բռնել Քրիստոսի ձեռքէն եւ անտեսել Քրիստոսի ձեռքին գործը՝ մարդը:

գ) Պէտք է անոնց սորվեցնեն սիրել աղօթքը: Մայր մը ո՛չ միայն պէտք է աղօթէ իր զաւակներուն համար, այլ նաեւ ու մանաւանդ, պէտք է անոնց հետ աղօթէ, եւ անոնց աղօթել սորվեցնէ: Մեր եկեղեցւոյ հայրերէն՝ Բարսեղ Մաշկետուրցին, կոչ կ'ուղղէ ծնողներուն որ իրենց զաւակներուն աղօթել սորվեցնեն, մանաւանդ՝ գիշերով արթննալ եւ աղօթել: Այն մայրը որ իր զակին աղօթել չի սորվեցնէր, կը նմանի այն զօրավարին որ իր զինուորները պատերազմի դաշտ կը դրկէ առանց զէնքի ու փամփուշտի: Կեանքը պատերազմի դաշտի նման է: Մայրեր պէտք չէ իրենց զաւակները պատերազմի դաշտ դրկեն առանց զէնքի ու փամփուշտի: Չաղթող զաւակը՝ զէնքէ ու փամփուշտէ զրկուած անձ կը նկատուի, որուն պարտութիւնը կեանքի պատերազմի դաշտին մէջ անխուսափելի է:

դ) Պէտք է անոնց սորվեցնեն սիրել Աստուածաշունչը եւ կարդալ գանիկա: Պէտք է սորվեցնեն վստահիլ Աստուծոյ խօսքին եւ կառչիլ Աստուծոյ խոստումներուն: Երբեմն մարդիկ կը մեղադրեն դպրոցի ուսուցիչները, որ չեն կրնար սէր ու հետաքրքրութիւն արթնցնել փոքրիկներուն մէջ Աստուածաշունչին հանդէպ: Եւ սակայն, փոքրիկներուն մէջ Աստուածաշունչին հանդէպ սէր ու հետաքրքրութիւն արթնցնելը, դպրոցի ուսուցիչներուն պարտականութիւնը չէ այնքան՝ որքան ծնողներուն պարտականութիւնը: Զաւակ մը որ իր մօրը կողմէ չէ սորված սիրել Աստուածաշունչը եւ Յիսուսի պատմութիւնները, ուսուցիչը չի կրնար դպրոցին մէջ սէր արթնցնել անոր մէջ Աստուածաշունչին հանդէպ:

***ՀԱՅ ՄՕՐ ԿՈՉՈՒՄԸ ԻՐ ԶԱՒԱԿՆԵՐՈՒՆ ՆՎԱՏՄԱՄԲ***  
***Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան***

## ՍՈՒՐԲ ԿՈՑՍ ՄԱՐԻԱՄ

### ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Հին Կտակարանին մէջ Սուրբ Կոյս Մարիամին համար գործածուած պատկերներն ու նշանները բազմաթիւ ու բազմատեսակ են: Այստեղ բոլորը յիշելը եւ բացատրելը անկարելի է, տեղի սղոյթեան պատճառով, բայց յիշեմ կարեւորագոյն 12 հատը միայն.-

1) Դրախտին մէջ հաստատուած կենաց Ծառը Մարիամ ինքն է, կ'ըսէ Գրիգոր Տաթեացին: «Կենաց Ծառ» կը կոչուի որովհետեւ իր վրայ հասունցաւ կենսատու Պտուղը՝ Քրիստոսը (Ծն 2.9):

2) Սաբեկի ծառը որ «ծնունդ տուաւ» խոյի մը, որ պիտի զոհուէր Իսահակի փոխարէն, կը ներկայացնէ Մարիամը որ ծնունդ տուաւ Աստուծոյ Գառնուկին, որ պիտի զոհուէր համայն մարդկութեան համար (Ծն 22.13):

3) Վառող բայց չկիզուող մորենիի ծառը կը ներկայացնէ Մարիամը (Ել 3.2): Ինչպէս կրակ վառեցաւ մորենիին մէջ, բայց զայն չայրեց ու չփճացուց, նոյնպէս ալ, աստուածային կրակը վառեցաւ Մարիամի արգանդին մէջ, բայց զայն չսպառեց ու չփճացուց:

4) Ահարոնի ծաղկող գաւազանը կը պատկերացնէ Մարիամը (Ծն Թւ 17.6-11): Ինչպէս Ահարոնի գաւազանը առանց խոնաւութեան ծաղկեցաւ ու պտուղ բերաւ, այնպէս ալ, Մարիամ առանց սերմի խոնաւութեան յղացաւ եւ պտղաբերեց աշխարհի Կերակրիչը:

5) Դափթ մարգարէն Սուրբ Կոյս Մարիամը կը նմանցնէ ծառի մը, «որ իր ժամանակին իր պտուղը պիտի տայ, եւ անոր տերեւը պիտի չթափի» (Սղ 1.3): Արդարեւ, Մարիամ եղաւ այն ծառը, որ իր ժամանակին, այսինքն՝ ճիշդ ատենին ծնաւ Յիսուսը, եւ Յիսուսը ծնելէ ետք իր տերեւը չթափեցաւ, այլ խօսքով՝ իր կուտութիւնը չկորսնցուց: Երբ ծառ մը իր պտուղները տայ, անկէ ետք կը թափէ իր տերեւները, որպէսզի պատրաստուի իր ժամանակին վերստին ծաղկելու ու պտուղներ տալու. Մարիամ սակայն Յիսուսը ծնելէ ետք, իր տերեւները չթափեց, այլ խօսքով՝ իր կուտութիւնը չխախտեց, որպէսզի ուրիշ զաւակներու ծնունդ տար, կ'ըսէ Գրիգոր Տաթեացին:

6) Սողոմոն Մարիամը կը կոչէ «Փակուած պարտէզ եւ կնքուած աղբիւր» (Երզ 4.12): Այս վկայութիւնը Մարիամի կարեւորական կուտութիւնը հաստատող ամենէն ուժեղ վկայութիւններէն մին է: Մարիամ եղաւ այն պարտէզը, որմէ դուրս եկաւ Աստուծոյ Որդին, եւ որուն դուրս գալէն ետք՝ պարտէզը փակուած մնաց, որովհետեւ ուրիշ մը չէր կրնար հոնկէ դուրս գալ: Դարձեալ, Մարիամ եղաւ այն աղբիւրը, որմէ դուրս «հոսեցաւ» Աստուծոյ Որդին, եւ որուն հոսումէն ետք՝ աղբիւրը կնքուած մնաց, որովհետեւ ուրիշ մը չէր կրնար հոնկէ դուրս հոսիլ:

7) Մարիամ անձնաւորումն է նոր ու կատարեալ Սիոնին՝ Երուսաղէմին: Ան կոչուած է ճշմարիտ Սիոնի դուստրը, որուն մէջ Իսրայէլի Աստուածը կը բնակի. «Հրճուէ՛, դո՛ւստր Սիոնի, բարձրածայն աղաղակէ՛, Երուսաղէ՛մ, ուրախացի՛ր եւ զուարճացի՛ր ամբողջ սրտովդ, դո՛ւստր Երուսաղէմի, որովհետեւ... Իսրայէլի թագաւորը՝ Տէրը ինք, թու մէջդ է» (Սովի 3.14-15):

8) Սրբարանի դուռը որ միշտ փակ պէտք էր մնար, եւ ուրկէ Իսրայէլի Տէր Աստուածը պիտի մտնէր ու հոնկէ դուրս գար՝ կը պատկերացնէ Մարիամը (Եզ 44.1-3): Արդարեւ, Մարիամ ինք եղաւ Սրբարանի արեւելեան այն դուռը, ուրկէ մտաւ ու դուրս եկաւ Իսրայէլի Աստուածը՝ Քրիստոսը: Այդ դուռը փակ պէտք էր մնար, այսինքն՝ Մարիամ Յիսուսէն զատ ուրիշով մը պիտի չլղանար (Թէոդորոս Քոթենաւոր, եւ Գրիգոր Տաթեացի):

9) Գզաթը2 որ իբրեւ նշան տրուեցաւ Գեղէօնին, կը ներկայացնէ Մարիամը: Գզաթին վրայ ցօղին իջնելը՝ կը պատկերացնէ Սուրբ Հոգիին էջքը Սուրբ Կոյս Մարիամին վրայ եւ անոր յղացուիլը. իսկ երկրորդ անգամ զգաթին չոր մնալը՝ ցոյց կու տայ որ Մարիամ այդ մարդու սերմ «չճանչցաւ» (Դտ 6.36-40) (Գրիգոր Տաթեացի):

10) Ներսէս Շնորհալի Հայրապետը կը հաստատէ, թէ Դանիէլ Սուրբ Կոյս Մարիամը պատկերացուց իբրեւ լեռ մը, որմէ քարի կտոր մը պոկուեցաւ առանց մարդկային ձեռքի միջամտութեան (Դն2.45): Լեռը Մարիամն է, իսկ լեռնէն պոկուած քարը՝ Քրիստոսը, որ առնուեցաւ լեռնէն (Մարիամէն) առանց մարդկային ձեռքի միջամտութեան, այսինքն՝ առանց մարդկային սերմի:

11) Համաձայն Ներսէս Շնորհալի Հայրապետին, Սողոմոնի «Կնդրուկի Բլուր» բացատրութիւնը կը վերաբերի Սուրբ Կոյս Մարիամին (Երզ 4.6):

12) Աստուած Եսայի մարգարէին միջոցաւ գալիք սերունդներուն նշան մը տուաւ ըսելով. «Ահա Կոյսը պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնի, եւ անոր անունը պիտի կոչեն Էմմանուէլ» (7.14): Կոյսի մը յղացուիլը ինքնին տրուած նշանն էր:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԱՐԻԱՄ ԵՒ  
ԱՆՈՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան





## ՆԻԿԻՈՅ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ

**«Ի ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԵԼՈՅ: Ի ԴԱՏԱՍԱՆ ՅԱԽՏԵՆԻՑ ՀՈԳԻՈՅ ԵՒ ՄԱՐՄՆՈՅ»:**  
(Ա. Բաժին)

**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ:**

ԹժՀ ին եւ թէ՛ Նոր Կտակարաններուն մէջ կը խօսուի մեռելներու ապագայ յարութեան մասին, երբ բոլոր «հողին մէջ քնացողները պիտի արթնան, ոմանք յափտենական կեանքի համար, ոմանք ալ նախատինքի ու յափտենական անարգանքի համար» (Դն եւ : Հմմտ Մտ : Յհ : Գրծ): Քրիստոսի ժամանակակից Հրեաները այս զօրեղ յարութեան հաւատքը ունէին (Տեն Յհ ):

**ՀՈԳԻԻ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՐՄՆԱՌՐ:**

ա) Ոմանք այս կեանքէն անդին ռեւէ գոյութիւն կը մերժեն ճանչնալ: Այդպիսին էին Սադուկեցիները Հրեաներուն մէջ: Այդպիսինք շատ կային Յոյն իմաստասէրներուն մէջ: Այդպիսիներ գտնուեցան եւ կան նաեւ քրիստոնեայ անունը կրողներու շարքին մէջ:

բ) Ուրիշներ հոգիներու անմահութիւնը կը ճանչնան ու կ’ընդունին, բայց կը մերժեն ընդունիլ մարմնաւոր յարութիւնը: Այդպիսին էին 2-րդ դարուն՝ Մարկիոն Պոնտացի, 3-րդ դարուն՝ Մանի, եւ ուրիշներ: Բայց Աստուածաշունչը յստակօրէն կ’ուսուցանէ մարմիններու յարութիւնը: (Տեն Յհ 5:25-27: Փլպ 3:20-21):

գ) Ուրիշներ մեռելներու յարութիւնը կ’ընդունին, բայց կ’ըսեն՝ թէ մեր այս մարմինները չեն որ յարութիւն պիտի առնեն, այլ՝ հոգիները երկնային մարմին պիտի ստանան: Բայց Աստուածաշունչը կ’ըսէ, թէ նոյն մեր այս մարմինները յարութիւն պիտի առնեն (Տեն Յոք 19:25-27: Փլպ 3:20-21):

դ) Տակաւին, ուրիշներ մերժեցին ընդհանրական յարութիւնը, ըսելով թէ միայն արդարները յարութիւն պիտի առնեն (այսպէս նաեւ՝ Եհովայի Վկաները): Մինչդեռ Աստուածաշունչը յստակօրէն հակառակը կը վկայէ՝ «Բոլոր մեռելները, թէ արդարները եւ թէ մեղաւորները, յարութիւն պիտի առնեն» (Գրծ 24:15):

**ԻՆՀՊԻՍԻ ՄԱՐՄԻՆ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՅԱՐՈՒՑԵԱԼ ՄԱՐՄԻՆԸ:**

«Ինչպէս յարութիւն կ’առնեն մեռելները. կամ ինչպիսի մարմինով պիտի գան» (Ա. Կր 15:35): Այս հարցումին պատասխանը կու տայ Պօղոս Առաքեալ (Ա. Կր 15:36-37): Ինչպէս հողին մէջ նետուած ցորենահատիկը եւ անկէ ծլած եւ աճած հասկին հատիկները տարբեր մարմիններ չեն, այլ նոյնը, մէկը միւսին նորոգութիւնը, բայց միաժամանակ միեւնոյն հատիկները չեն, այլ նորերը հինին փոխակերպուածն են, այնպէս ալ մեռած մարմինը երբ հողէն դուրս գայ՝ ներկայի մարմինէն տարբեր պիտի չըլլայ, այլ՝ նոյն մարմինը, սակայն նորոգուած ու փոխակերպուած: Որովհետեւ այժմ մեր մարմինները «շնչաւոր» են, եղծանելի, անարգ, տկար, մահկանացու, մինչդեռ յարութենէն ետք նոյն այդ մարմինները պիտի ըլլան՝ «հոգեւոր», անեղծ, փառաւոր, զօրաւոր եւ անմահ (տեն Ա. Կր 15:42-44):

Արդ, յարութեան օրը բոլորս ալ պիտի փոխակերպուինք այնպէս՝ որ մարմինները վերագտնեն սկզբնական իրենց վիճակը, առաջին կատարելութիւնը, երբ տակաւինն մեծքը չէր տիրած մարդուն եւ անոր հետեանքը եղող տկարութիւններն ու խեղդութիւնները չէին եղծած աստուածաստեղծ մեր պատկերը:

